ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆՔԾԻԳ-ԲԸԾՁԲ-14/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2014 թվականի հունիսի 5-ին կնքված N ԲԸԾՁԲ-14/2-2 պայմանագրում 2018 թվականի ապրիլի 9-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 ՀՀ Կառավարության 29.03.2018թ. թիվ 326-Ն որոշում:

| | |
|---|---|
| Փոփոխության նկարագրություն | Պակասեցվել է 2018թ.-ի համար նախատեսված գումարը, փոխարինվել է Պայմանագրի վճարման ժամանակացույցը, |
| Փոփոխության հիմնավորում | 2014 հունիսի 5-ին կնքված N ԲԸԾՁԲ-14/2-2 պայմանագրի 7.3 կետը: |

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 8

## 05.06.2014թ. կնքված N ԲԸԾՁԲ-14/2-2 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան 09 ապրիլի 2018 թ.

«ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Պարապետ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ն. Բաղրամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018թ. մարտի 29-ի N 326-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 05.06.2014թ. կնքված N ԲԸԾՁԲ-14/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի.

1.1.1 2018թ. համար նախատեսված գումարի <<1329900 (մեկ միլիոն երեք հարյուր քսանինը հազար ինը հարյուր) >> բառերը փոխարինել <<912300 (ինը հարյուր տասներկու հազար երեք հարյուր)>> բառերով.

1.1.2 հավելված N 1-ով սահմանված վճարման ժամանակացույցը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի հավելվածը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

**<<ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ**

ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011012524, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____________ Ա. Մկրտչյան

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ՝**

**<<Պարապետ>> ՍՊԸ**

Այգեստան 4 փող., 10 տուն

<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ,

Հ/Հ 247010039300,

ՀՎՀՀ 01225935

Տնօրեն՝

_____________ Ն. Բաղրամյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
09.04.2018թ. կնքված համաձայնագիր N 8-ի
<<Հավելված N 1
*05.06.2014թ. կնքված*
*N ԲՀԾՁԲ-14/2-2 գնման պայմանագրի*
*15.02.2018 թ. կնքված N 7 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(Բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն | - | - | - | 212800 | 212800 | 212800 | 527700 | 527700 | 527700 | 912300 | 912300 | 912300 | 912300 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով: >>

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ՝**
**<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ**
ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012524, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝**
**<<Պարապետ>> ՍՊԸ**
Այգեստան 4 փող., 10 տուն
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ,
Հ/Հ 247010039300,
ՀՎՀՀ 01225935

Տնօրեն՝

Ն. Բաղրամյան
(ստորագրություն)

Կ.Տ.